№ 233 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 233

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆ

Ուրբաթ, հոկտեմբերի 17-ին, Գրական-Գեղագիտական Սալոնի IX (1914—15) տարեշրջանի բացումը։ Հանդիսաւոր jour fixe-ը՝ Réception. Զրոյց Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ՝ «Ճանապարհորդական տպաւորութիւններ N. B.-եաններով և արկածներ լուսաբանութիւնով»։
Սալոնի մշտական այցելուները՝ արուեստագէտներ, գեղագէտներ, գրականագէտներ, լրագրողներ իրանց ընտանիքներով և «ՏԱՐԱԶԻ» բաժանորդները եթէ մինչև ուրբաթ առաւօտ. 10 ժամը ստացած չը լինեն սեզօնի համար հրաւիրատոմս, յարգանօք խնդրվում են մինչև կէսօր հաղորդել իրանց հասցէն։ Կողմնակի մարդկանց համար (շատ սահմանափակ թիւ) մուտքը 2 ր., որ պէտք է վերցնել տոմսակ մինչև ուրբաթ ցեր. ժամը 4-ը։
Սկիզբը 9 ժամին երեկոյեան։
առ. 54. 3—2

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ, ԳՐԱԿԱՆԱԳԷՏ. ԵՒ ԺՈՒՐՆԱԼԻՍՏՆԵՐԻ
ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ՝
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏ. ԱԼՄԱՆԱԽԻ
յօգուտ պատերազմի աղէտեալների հրատարակելու մասին, կը կայանայ վաղը, ուրբաթ, հոկտեմբերի 17-ին, Գրական-Գեղագիտական Սալոնում, սրա jour fixe-ից յետոյ։
Սրանով բոլոր նրանք, որոնք մասնակցում էին հոկտեմբերի 9-ին կայացած առաջին ժողովին և որոնք հրաւիրված էին, բայց չէին եկել, հրաւիրվում են դարձեալ մասնակցել։
առ. 2—1

Ս. ԶԱՒԱՐԵԱՆ
ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆ։
(Մահվան տարեդարձի առիթով) «ՏԱՐԱԶԻ» 1913 թ. հոկտեմբերի ալմանախ №-ը՝ նուիրված Ս. ԶԱՒԱՐԵԱՆԻ, ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ և Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ յաւերժ յիշատակին, սրանց 43 տեսակ զանազան ժամանակների լուսանկարներով, մեծադիր պատկերներով, ինքնաձեռագրերով, պ. պ. բժ. Աղասարեանի, Ա. Աթանասեանի, Ա. Եզեկեանի, Լէօնիդի, բժշկ. Բ. Նաւասարդեանի, Շիրվանզադէի, Ե. Տէր-Գրիգորեանի, Գր. Մկրտչեանի, Ար. Րաֆֆիի, Սուսարի և այլն յօդուածներով։ Մնայուն այս շքեղ հանդէսը «ՏԱՐԱԶԻ», գեղանի յիշատակ Ս. Զաւարեանի, Ալ. Քալանթարի և Կ. Խատիսեանի, իւրաքանչիւր հայ տան և գրադարանի անհրաժեշտ զարդ, մինչև առաջիկայ նոյեմբերի 1-ը վաճառվում է հատը 2 ր. փոխարէն ՄԷԿ ռուբ. 20 կ.։ Կուղարկվի յատուկ խողովակներում և заказное. Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։
Հասցէն՝ БЮРО ПЕЧАТИ, Тифлисъ, Головинскій пр., № 41.
(հ. կ.) առ. 5—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
(հ. կ.) առ 868. 100—96

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սոլոլակ, Ռտիշչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 784. 100—23

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՋԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հանումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նըբափողոցից։
առ. (ա. օ.) 0—39 804.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ պատմական խոշոր րոպէներում, երբ մեզ հայերիս անհրաժեշտ է որոշել և ընդգծել մեր ազգային քաղաքականութիւնը, երբ համաեւրոպական պատերազմի դէպքերի բերմամբ, կեանքը հրապարակ է նետել և Թիւրքահայաստանի ապագայ կազմակերպութեան հարցը, երբ մենք հայերս մեր ազգային բաղդը կապել ենք ռուսական զէնքի յաղթանակի հետ,—աւելի և աւելի անհրաժեշտ է դառնում համազգային ժողովի գումարումը։

Եւ այդ գաղափարը, որ հրապարակ նետեցին միաժամանակ «Մշակ» և «Баку» թերթերը, դարձաւ հայ և ռուս մամուլի քննութեան առարկայ։ Նա գրգեց և հասարակական կարծիքը։

Սկզբունքով ամենքը ընդունում և ճանաչում են համազգային ժողովի անհրաժեշտութիւնը և օգուտը, բայց կարծիքները տարբերվում են նրա գումարման ժամանակի և նրա նպատակների մասին։

Ոմանք անժամանակ են գտնում և դժուար ներկայ պարագաներում համազգային ժողովի գումարումը և առաջարկում են բաւականանալ առայժմ խորհրդակցական ժողովներով, այն ձևով, ինչպէս վերջերս սովորութիւն է դարձել. այլ խօսքերով՝ նրանք առաջարկում են գումարել համազգային ժողովի տեղ նրա մի տեսակ սուրրօգատը, երբ մի քանի դպրոցական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներից գումարվում է մի ժողով և դրան տրվում է համազգային ժողով անունը։

Արևի պէս պարզ է, որ այդ տեսակ ժողովները, խորհրդակցութիւնները բնաւ չեն կարող բռնել իսկական ազգային ժողովի տեղը, որովհետև նրանք չեն կարող արտայայտել հայ ժողովրդի միահողոյն կամքը, իղձը և ցանկութիւնները։

Կուլտուրական և դպրոցական հաստատութիւնների անդամները ընտրված են որոշ մի ֆունկցիայի պաշտօնավարութեան համար. օրինակ, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներին Թիֆլիսի թեմի ժողովուրդը ընտրել է յատկապէս և միայն վարելու Ներսիսեան դպրոցի գործերը. Կ. Հ. Բարեգ. Ընկ. Խորհրդին ընկերութեան անդամները ընտրել են յատկապէս և միայն ընկերութեան գործերը վարելու։ Նրանց բնաւ իրաւունք չէ տրված, նրանք բնաւ լիազօրված չեն քննելու, վարելու և այնպիսի գործեր, որոնք դուրս են Ներսիսեան դպրոցի կամ Կ. Հ. Բ. Ընկ. շրջանակից։ Եթէ նրանք դուրս գան այդ շրջանակից, նրանք ապօրէնութիւն կը գործեն և ուզուրպատորներ կը հանդիսանան։ Ասացէք, խնդրեմ, ինչ իրաւունքով Ներսիսեան կամ Յովնանեան դպրոցի հոգաբարձուն, Բարեգործական կամ Դրամատիկական և կամ Մարդասիրական ընկերութիւնների ներկայացուցիչները պէտք է զբաղվեն Թիւրքահայերի հարցի քննութեամբ կամ մի այլ ազգային հարցի քննութեամբ, որ ոչ մի կապ չունի այդ հաստատութիւնների հետ։

Պարզ է, որ այդպիսի ներկայացուցիչներով կազմված որևէ մի ժողով բնաւ իրաւունք չունի զբաղվել ազգային կարևոր հարցերով և այդ ձեռնհասութիւնը պատկանում է միայն ազգից օրինաւորապէս ընտրված մի ժողովի։

Այսօր, պատերազմի դէպքերի առիթով, հրապարակի վրա է դրված Թիւրքահայաստանի ազատագրութեան հարցը։ Արտայայտվում են զանազան կարծիքներ. ընդհանուր ցանկութիւն է, որ Թիւրքահայաստանին տրվի աւտօնոմիա։ Կան և ուրիշ ծրագիրներ—լայն րէֆօրմների ներմուծում և այլն. վերջապէս կայ և այն կարծիքը, որ եթէ աւտօնոմիան և րէֆօրմները չաջողվեն, այն ժամանակ հարկաւոր է, որ Ռուսաստանի կողմից աննէկսիա կատարվի։

Արդ, հարցնում ենք, ով կարող է, ո՞վ ձեռնհաս է, ո՞վ իրաւունք ունի, բարոյական և իրաւագիտական, զբաղվելու այդպիսի հարցերի քննութեամբ և լուծմամբ. ո՞վ կը համարձակի քննել, լուծել այդպիսի հարցեր, առանց կանխապէս իմանալու կարծիքն այն ժողովրդի, որի համար և որի անունով կատարվում և կատարվելու են այդ ամենը։

Կը պատասխանենք — միայն և եթ համազգային ժողովը. միայն և եթ սա է կոչված, սա ունի բարոյական և իրաւագիտական ձեռնհասութիւն քննելու և լուծելու այդպիսի հարցեր, և ոչ այս և այն կուսակցութիւնը, խմբակցութիւնը, բիւրօն կամ մարմինը։

Ահա այդ շատ պարզ պատճառներով մենք ամեն կերպ պէտք է աշխատենք, որ գլուխ բերվի համազգային ժողովի գումարումը։

Գալով այն հարցին, թէ այժմ անժամանակ է և դժուարին, մենք կարծում ենք, որ այդ առարկութիւնը անկեղծ չէ և արվում է նրանց կողմից, ովքեր սրտով հակառակ են համազգային ժողովի գումարման, բայց քաջութիւն չունեն խոստովանելու։

Մենք նախ պէտք է աշխատենք և փորձենք գումարել և ապա ասել թէ անժամանակ է և դժուար։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Արևելեան-պրուսական ճակատում սկսվեցին կռիւները։ Գերմանացիների յամառ յարձակումները Բակալարժեվի շրջանում ետ մղվեցին։ Վիսլայի ձախ ափում, Գօմբինում մենք վերցրինք գերմանական սայլեր, գերիներ։ Ճակատամարտի վայրը ընդարձակվեց և հոկտ. 13-ին ձգվեց Կւտնօյից Եժով—Ռաւա—Նովէ-Մեստօ —Բեալօբրժեգի—Գլովաչեվ և մինչև Իլժանկի ակունքները։ Գերմանական զօրքերի մէջ նորից հագստափոխված մասեր երևան հանվեցին։ Առանձնապէս յամառ կռիւ բռնկվեց Եժով-Ռաւայի շրջանում, ուր մենք մասամբ գրաւեցինք թշնամու դիրքերը։ Մենք էական աջողութիւն ունեցանք Նովայա-Ալէքսանդրիա—Զվոլէնի ուղղութեամբ, ուր թշնամին նահանջելու դրութեան մէջ է գտնվում, և մենք գերի վերցրինք մինչև 50 օֆիցեր և 3000 զինուոր. վերցված են գնդացիրներ և 8 թնդանօթ։ Սոլցից դէպի հարաւ մեր զօրքերը Վիսլան անցնելով գերել են 8 օֆիցերի և 300 զինուորի և վերցրել մի շարք գնդացիրներ։

«Պերէմիշլից դէպի հարաւ ընկած շրջանում մեր զօրքերը կռիւ մղելով հասան Ստարօբէ-Մեստօ-Տուրկայի երկաթուղուն։

«Աւստրիացիների փորձը՝ բռնել գեներալ Բրուսիլովի զօրքի ձախ թեւը՝ ողբալի վերջ ունեցաւ։ Հոկտ. 11-ին Սամբորից դէպի հարաւ 20 վերստի վրա մեր զօրքերը շրջապատեցին Պօրուշի ձորում աւստրիական դիվիզիային իր զօրամասերով և բարձրութիւններից կրակ բացին նրանց վրա։ Շատ քչերին միայն աջողվեց երեկոյեան փախչել լեռնային արահետներով։ 20 թնդանօթի արտիլերիան և շատ սայլեր մեզ մնացին։ Աւստրիացիների պարտութիւնը Ստրիի և Պօրուշի հովիտներում նշանակալից է այն տեսակէտից, որ հարուածը հասցվել է առաւելապէս աւստրիական հետևակներին և հեծելագնդին»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14—15 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւն. «Գերմանացիք Բէլգիայում ենթարկեցին Նիւպօրը կատաղի ռմբակոծութեան և շարունակեցին յամառ յարձակումներ գործել Նիւպօր-Դիկսմիւդէ զօրաճակատի վրա, բայց մինչև վերջին րոպէն, ըստ երևոյթին, ոչ մի հետևանքի չը հասան։ Լա-Բասսէի և Սոմմի միջև զօրաճակատի մի մասը նոյնպէս ենթարկվեց խիզախ յարձակումների ամբողջ գիշեր, սակայն յարձակումները ետ են մղված»։

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն յայտարարում է. «Դրութիւնը մնում է բաւարար։ Ցամաքի կռիւը շարունակվում է։ Անգլիացի զօրքերին արդէն աջողվել է առաջանալ, գերելով մեծ թւով թշնամու։ Անգլիական մի զօրաբանակ ձեռք է ձգել երկու թնդանօթ»։

Գերմանացիների ջանքերը՝ առաջանալ դէպի Կալէ, որը, ըստ երևոյթին, հարկաւոր է իբրև ռազմադիրք անգլիացիների դէմ գործելու համար, չեն սպառնում անգլիացիներին, որովհետև նրա և Անգլիայի միջև մնում է անգլիական նաւատորմը։ Մեծ Բրիտանիայի ծովափը ռմբակոծելը գերմանացիների համար բնաւ աւելի հեշտ չի ներկայանայ Կալէից, քան թէ Վիլհէլմսհաֆէնից։ Լրագիրները ընդգծում են, որ գերմանացիք, չը նայած իրանց գործադրած բոլոր ճիգերին, դեռ շատ հեռու են Կալէից և նրանց կարելի է վանել դէպի Հօլլանդիայի սահմանը, առաջ քան նրանց աջողվի տիրել այդ ռազմադիրքին։

ԿԱՊՇՏԱԴ.—Գնդապետ Մարիցը բոլորովին պարտվեց։ Վիրաւորվելով, նա փախաւ գերմանական գաղութների սահմանները։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն. «Արևելքում առաջվայ պէս շարունակվում է կատաղի կռիւը Իզերի ակունքի և Լանսի շրջանի միջև։ Զօրաճակատների այդ մասերում դաշնակիցները ոչ մի տեղ չեն նահանջել և շարունակեցին շարժվել։ Իպրի և Ռուլերի շրջանի միջև և Սուասսոնի ու Բերրիօբակի շրջաններում արտիլերիական կռիւը բարեյաջող է եղել ֆրանսիացիների համար, և ոչնչացվել է թշնամու մի քանի հրետանի։ Նանսիից դէպի արևելք ընկած շրջանում, Բեզանժի և Պարրուէի անտառների միջև ֆրանսիացիները յարձակման դիմեցին և թշնամուն շպրտեցին սահմանի այն կողմը»։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 հոկտեմբերի

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ. — Դանիական «Օսկար II» ճանապարհորդական շոգենաւը, որ Նիւ-Եորկից դիմում էր Կոպէնհագէն, բռնվել է անգլիական մի ռազմանաւից և տարվել Ստորնոուէյ։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Դանիական «Օսկար II» շոգենաւին թոյլատրված է գնալ իր տեղը։

ՀՌՈՄ.—«Կալամբրիա» յածանաւը, որին շուտով միանալու է «Էտնա» յածանաւը, սկսեց լողալ Միջին Ալբանիայի ծովափին մօտ, որպէսզի թոյլ չը տայ անց կացնել կօնտրաբանտ զէնք ու ռազմամթերք, նաև զօրք ափ իջեցնել, որովհետև Ալբանիայի չէզոքութիւնը սանկցիա է ստացել Անգլիայի կողմից։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Վաշինգտոնի կայսեր. ռուսական դեսպանի կինը ռուս բանւորների մէջ հաւաքել է 5700 ր. ռուսական Կարմիր Խաչի օգտին։

Հիւսիս արևմտեան ճակատի պատերազմական գործողութիւնների շրջանն է ուղարկվում Պետական Դումայի անուան լազարէթը, որի վարչի գլուխ է կանգնած Պետական Դումայի լիազօր անդամ Սաւեպանովսկի։ Հիւանդանոցն ունի 5 բժիշկ, 29 գթութեան քոյր, պրովիզոր, 27 սանիտար և այլն։

ՀՌՈՄ.—Բազմամարդ միտինգ կայացաւ յօգուտ Տրիէստի և Տրիէնտի։ Հռետօր Բարիստը, Տրիէնտի պատգամաւորը, աղմկալից ծափեր յարուցեց իր ակնարկով, որ Ռուսաստանի առաջարկութիւնը ճանաչում է Իտալիայի իրաւունքը Տրիէստի և Տրիէնտի վերաբերմամբ։ Բոլոր ներկայ եղողները ոտքի կանգնելով ողջունեցին Ռուսաստանին։ Միւս հռետօրների թւում հանդէս եկան պատգամաւորներ Բարցիլայի, Բիսսօլատի և Գալլենգա։

ԼՕՆԴՕՆ.—«Ադմիրալ Գանտօմ» շոգենաւը, որ 2500 փախստականներով Կալէից Հավր էր գնում, Բուլօնի մօտ դիպաւ ականի։ Իրարանցման ժամանակ խեղդվեցին 30 հոգի. մնացած ճանապարհորդները տեղ են հասցվել «Կվին» շոգենաւով։

ՏՕԿԻՕ.—Եապօնական Կարմիր Խաչին հանդիսաւորապէս դիմաւորելը Վլադիվօստոկում՝ եապօնական մամուլի կողմից ողջունվում է, համարելով որ Կարմիր Խաչի այդ խումբը Ռուսաստան ուղարկելը կը նպաստի եապօնա-ռուսական բարեկամութեան ամրապնդման։

Պարլամենտը հրաւիրվում է յունվարի 5-ին։

Եապօնական նաւերը ուժեղ աւերումներ են կատարել Ցինդաօյի ամրութիւններում։ «Իլտիս» ամրութեան մէջ ոչնչացված է մի թնդանօթ, իսկ «Բիսմարկ» ամրութեան մէջ՝ երկու թնդանօթ։ Ռմբակոծութեան ժամանակ եապօնացիներին էական ծառայութիւն են ցոյց տուել հիդրօպլանները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին՝ Մեծ Իշխանուհիներ Օլգա Նիկօլայեւնայի և Տատեանա Նիկօլաեւնայի հետ միասին՝ այցելեցին Սեմեօնովսկի և Ալէքսանդրովսկի հիւանդանոցները, բարեհաճեցին անցնել և ողորմած հարց ու փորձի արժանացրին վիրաւորներին, ըստ որում Թագաւոր Կայսրը բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել ծառայութեան համար և մօտ 20 շքանշան Գէօրգի ժապաւէններով շնորհեց քաջութեան համար։

Կայացաւ դանիական գաղութի հիւանդանոցի բացումը Պետրօգրադում։ Հիւանդանոցը իր հովանաւորութեան տակ է առել Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան։

ՅԱՐՕՍԼԱՎԼ.—Զօրքի մէջ կանչելու առիթով Դեմիդովսկի լիցէյի ուսանողները հայրենասիրական հսկայական ցոյց կազմեցին, Թագաւորի պատկերով, դրօշակներով և ժողովրդական հիմնի երգեցողութեամբ։ «Ուրա» կանչելով նրանք անցնում էին գլխաւոր փողոցներով, աղմկալի դիմաւորում ցոյց տալով հանդիպող օֆիցերներին։ Ուսանողութիւնը խնդրել է նահանգապետին՝ Թագաւոր Կայսրին իրանց հաւատարիմ հպատակութեան սիրոյ և շնորհակալութեան զգացմունքները յայտնել։

ԼՕՆԴՕՆ. — «Թայմսը» իր առաջնորդող յօդուածը, որ կրում է «Դաշնակիցների եղբայրութիւն» վերնագիրը, վերջացնում է հետևեալ խօսքերով. «Ներկայ կրիտիքական մոմենտում մեծ բարեկամութեան մասին եղած միտքը, որ օրէ-օր ամրապնդվում է Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի մէջ, հանդիսանում է մխիթարական այն ջանքերի մէջ, որ մենք անում ենք, և այն տանջանքների մէջ, որ կրում ենք մենք։ Յոյս ունենք, որ այս պատերազմի աւարտումից յետոյ այդ բարեկամութիւնը կը փոխվի եղբայրութեան, աւելի սերտ, քան երբևիցէ, որ գոյութիւն է ունեցել Եւրոպայի ժողովուրդների մէջ։ Մենք բաղդաւոր ենք,— ասում է այնուհետև «Թայմս»,—մեր դաշնակիցներից, որովհետև նաւատորմը մեզ պաշտպանում է այն բանից, ինչ որ կրում են նրանք, սակայն այդ հանգամանքը առաւել ևս կամրապնդէ մեր ձգտման մէջ օգտագործել մեր ողջ ույժը այն նպատակին հասնելու համար, որ առաջադրել ենք ոչ միայն մենք, այլ և նրանք»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սեմեօնովսկի հիւանդանոցը այցելելուց յետոյ Նորին Կայսերական Մեծութիւնները Օգոստափառ Դուստրների հետ բարեհաճեցին այցելել Գահաժառանգի անուան հիւանդանոցի վիրաւոր օֆիցերներին և զինուորներին։ Այդ հիւանդանոցը կահաւորված է և պահվում է Մանթաշեանի միջոցներով։ Հիւանդանոցը տեղաւորված է Նիկոլայեվսկի զինուորական ճեմարանի շէնութեան մէջ։ Նոյն Մեծութիւնները հարց ու փորձ արին զինուորներին։ Թագաւոր Կայսրը շնորհակալութիւն յայտնեց ծառայութեան համար և շքանշաններ շնորհեց զինուորներին քաջութեան համար, իսկ Թագուհի Կայսրուհին՝ վզի պատկերներ։

ԼՎՕՎ.—«Պրիկարպատսկայա Ռուսը» տեղեկութիւն է ստացել Կանադայից, որ այնտեղ ապրող գալիցիական գիւղացիները իրանց ուրախութիւնն են յայտնում հայրենիքը աւստրիական լծից ազատելու առիթով։ Լվովի գրաւումը հիացմունք է պատճառել գաղթականների մէջ։ Որպէս աւստրիահպատակներ, գալիցիացիները պէտք է մտնէին աւստրիական զօրքերի մէջ։ Ամբողջ Կանադայում ժողովներ են լինում, ուր բանաձևեր են ընդունվում մտնել անգլիական զօրքի շարքը։

ԱՄՍՏԵՐԴԱՄ.—Լրագիրների ասելով, անցեալ կիրակի Գէնտ են եկել 10,000 աւստրիացի։ Քաղաքում շատ քիչ գերմանացիներ են մնացել։

ՍՕՖԻԱ.—Ռուս ուխտաւորները մեկնեցին Շիպինսկի վանքը, ուր հոգեհանգիստ կատարվեց ռուս-թիւրքական պատերազմում ընկած հերոսների յիշատակին և մաղթանք՝ ներկայ պատերազմում ռուսաց զօրքին յաղթութիւն շնորհելու մասին։

ԼՈՆԴՈՆ. — Րէյտէրի գործակալութիւնը տեղեկացել է, որ յունական կառավարութիւնը յայտնել է պետութիւններին, թէ Յունաստանը մտադիր է նորից գրաւել Եպիրոսը։ Այդ գրաւումը, սակայն, լինելու է միայն ժամանակաւոր։ Յունաստանը մտադիր չէ գրաւել Վալոնը, համարելով այն յունական ազդեցութեան շրջանից դուրս։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 հոկտեմբերի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Հաղորդում են, որ Ֆէրդինանդ Թագաւորը ցանկութիւն է յայտնել, որ թագադրութիւնը կայանայ յունվարի 16-ին, Վալախեան և Մոլդավեան իշխանութիւնների միացման տարեդարձի օրը։ Թագաւորի այս հայրենասիրութիւնը հիացմունք է առաջացրել քաղաքական շրջաններում։

Բեկստոն եղբայրները առողջացան և մի քանի օրից յետոյ Անգլիա կը մեկնեն։ Նրանք յայտնեցին, որ հրաժարվում են քաղաքացիական պահանջից, վստահելով ռումինական արդարադատութեան։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ցետինիէից հեռագրում են, որ աւստրիական նաւատորմը շեշտակի ռմբակոծութիւն է սկսել Լովչէնի դէմ։

◆ «Бирж. Вѣд.»-ի ասելով պատերազմի դաշտ է մեկնել իբրև կամաւոր զինւոր 62 տարեկան Տրուֆանովը, որ մասնակցել է Կոկանդի, թիւրքական և ճապօնական պատերազմներին և ունի երեք Գէօրգի։

◆ Պետրօգրադում ցոյցերի ժամանակ ջարդված ապակիների արժէքը մինչև օրս կատարած հաշւով հասնում է մօտ 100,000 ռուբլի։

◆ Պատերազմի դաշտում վիրաւորվել են հայերից պրոֆ. Յովհաննէս Ս. Ղազարեանց և պրոֆ. Կ. Ս. Սարգսեան։

◆ Մոսկվայի յայտնի բարեգործ Շախովը նուիրել է 10,000 ռուբլի յօգուտ Լեհական Թագաւորութեան ազգաբնակութեան։

◆ Ժընէվում երևան է հանված գերմանական լրտեսների կազմակերպութիւն։

◆ Անտիվարիում ափ են իջել 10,000 հնդիկ զինւոր, որոնք դիմում են չեռնօգորցիներին օգնելու։

◆ 15 յունական երկաթուղով ուտելիք է տարված Բելգրադ։

◆ Ալբան կառավարութեան մէջ երկպառակութիւն է ծագել։ Էսադ փաշան փախել է Սերբիա։

◆ Ռումինական արտաքին գործերի մինիստրի պաշտօնը առաջարկված է Պետրօգրադի դեսպան Դիմանդիին։

◆ Պատերազմի սկզբից Կիէվ են տարված թշնամու 75,000 գերի։

◆ «Թայմսի» ասելով, Ֆլանդրիայում տեղի ունեցած վերջին կռիւները ամբողջ պատերազմի ընթացքում եղած կռիւներից ամենաարիւնահեղներն էին. գերմանացիների զոհերի թիւը կազմում է մի քանի տասնեակ հազար մարդ։ Միայն երկու օրում գերմանացիք կորցրել են 30,000 հոգու։

◆ «Арм. Вѣстн.» գրում է, որ գերմանացիք նահանջում են Վիսլայի մօտից, ճանապարհին աւերելով հանդիպածը։ Տեղ-տեղ նրանք դիմում են յուսահատական հակայարձակումների։

◆ Հայ դրամատէր Դաւիթ խան Աւան-Իւզբաշեանի միջոցներով, նրա ամուսնու ձեռքով կազմակերպվել է մի դաշտային սանիտարական արշաւախումբ, որ գործում է Վարշավայի շրջանում։ Այժմ Բաքւում տեղեկութիւն է ստացվել, որ Թագուհի Կայսրուհին ամենաողորմածաբար իր հովանաւորութեան ներքոյ է առել այդ սանիտարական արշաւախումբը։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

◆ Կ. Պոլսում լուրեր են պտտվում, թէ հրաման է ստորագրված՝ «Գեբէնի» և «Բրէսլաուի» գերմանացի օֆիցէրներին պաշտօնանկ անելու մասին։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Դէրկոսլճից դէպի արևմուտք թիւրքերը կառուցանում են դաշտային ուժեղ ամրութիւններ, որոնց առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ ճակատի առաջ կան փոսեր և լցվում են լճի ջրով։

◆ Կ. Պոլսից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին. «Տեղի ունեցաւ նոր խիստ յեղաշրջում բարձր շրջանների տրամադրութեան մէջ։ Երրեակ համաձայնութեան պետութիւնների նոր պահանջը՝ բանալ Դարդանէլը՝ Բ. Դուռը նորից մերժեց։ Այդպիսով ստեղծվեց լարված դրութիւն, որի հանդէպ թիւրք կուսակցութիւնների իրար հետ տարաձայնող գործիչները հաշտվեցին։ Գերմանասէր մամուլը վերսկսեց իր պրովոկացիոն գործունէութիւնը։ Սուլթանը նորից ընկաւ Էնվէր-փաշայի կողմնակիցների ձեռքը։ Եուսուֆ-Իզզէդդինին գեներալիսիմուս կարգելը վերջին րոպէին գլուխ չեկաւ։ Գեներալիսիմուսի կոչումը կրում է ինքը սուլթանը։ Փոխ-գեներալիսիմուս նշանակվել է Էնվէր-փաշան։

◆ Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Թալէաթ-բէյն առաջարկեց տիեզերական պատրիարքին մեկնել մինչև նոյեմբերի 1-ը։

◆ Կ. Պոլսում գերմանական դեսպանը սպառնական նամակներ է ստանում թիւրքերէն լեզուով «հայրենիքի անկեղծ գաղտնի պաշտպանների միութեան» կողմից։

◆ «Р. У.»-ի թղթակիցը Կ. Պոլսից հեռագրում է, որ «Մ. և Ա.» կոմիտէտը գաւառ ուղարկեց պաշտօնական ծանուցում այն մասին, որ Թիւրքիայի ռազմի պատրաստութիւններն արդէն աւարտված են և Թիւրքիան պատրաստ է դէմ առ դէմ ելնել թշնամուն։

◆ Կ. Պոլսից «Р. У.»-ի թղթակիցը ճշդելով հայերի մէջ սկսված ընդարձակ խուզարկութիւնների տեղեկութիւնները՝ յարակցում է, որ ձերբակալվածների թւումն են դաշնակցական բժիշկ Ճէլալեանը և Հնչակեան կուսակցութեան անդամներից մէկը։

◆ «Р. В.»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ ֆինանսների մինիստրութիւնը Կարմիր Մահիկի տրամադրութեան տակ դրեց 250,000 թիւրքական ֆունտ՝ պատերազմի դէպքում սանիտարական գործի կազմակերպութեան համար։ Սանիտարական գործը գտնվելու է գերմանացի պրոֆէսօրների ղեկավարութեան տակ։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Աբդուլ-Համիդի որդիների վրա խիստ հսկողութիւն է սահմանված, որովհետև նրանք շփվում են օպպօզիցիայի հետ։ Բուրհան-Էդդինին նախազգուշացված է, որ եթէ իր ագիտացիան երիտասարդ-թիւրքերի դէմ շարունակէ, նա կը զրկվի ռոճիկից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վերջին տեղեկութիւնը Զէյթունի հայերի ապստամբութեան մասին, հնարաւոր պատերազմը Թիւրքիայի հետ Հին Հայաստանի հողերում, հայերի համակրութիւնը դէպի Մեծ Ռուսաստանը, որին նրանք նայում են, որպէս իրանց ազատարարին,—այս ամենը ընդհանուրի ուշադրութիւնն են գրաւում դէպի Թիւրքիայում ապրող հայ ժողովրդի ճակատագիրը, ժողովրդի, որը յանձնված է վայրի քիւրդերի և թիւրք պաշտօնեաների «տնահարումին և կողոպտման»։

Մօտ ժամանակներս հայոց ազգային կոմիտէտի յանձնարարութեամբ, թիւրքահայերի տնտեսական դրութիւնը ուսումնասիրելու համար այցելելով Թիւրքիան, կոոպերացիային գործիչ պրիվ.-դոց. Վ. Ֆ. Տոտոմեանց «Р. Утро»-ի աշխատակցի հետ ունեցած զրոյցի ժամանակ այսպէս է բնորոշել հայ-թիւրքական գործերի դրութիւնը։

— Զէյթունը՝ իւրատեսակ հայկական Չերնոգորիա է։ Ամբողջ շրջանը ընկած է բարձր, անմատչելի լեռների վրա։ Տեղական հայերը վաղուց ի վեր յայտնի են իրանց անկախութեամբ և ապստամբութեամբ։ Թիւրքիայի «պատժող բռունցքը» շատ անգամ է նրանց կողմից խիստ ընդդիմադրութեան հանդիպել։ Ներկայ ապստամբութիւնը կարող է հանդիսանալ նոյն կամայականութեան և բռնութեան քաղաքականութեան հետևանք, որին հայերը ենթարկվել են առաջ, ենթարկվում են և այժմ, երբ իշխանութեան գլուխ են կանգնած երիտասարդ-թիւրքերը։

Այժմ գուցէ աւելի վատ։

Ես արդէն էլ չեմ խօսում հայ ազգաբնակութիւնը շահագործելու լեգալ ձևի մասին, որ արվում է գիւղատնտեսական բանկի բաժանմունքի օգնութեամբ, որը Թիւրքահայաստանում խիստ քաղաքականութիւն է վարում հայերին անձեռնտու փոխատուութիւնների միջոցով, այն նպատակով, որ նրանց հողազուրկ դարձնի և հողերը ծախել տայ թիւրքերին ու քիւրդերին։ Հայերից հողերը խլելը մասնաւոր անձանց կողմից՝ անցնում է առանց դատի ու քննութեան, իր կարգով։

Հայերին առաջվայ նման մորթում և բռնադատում են։

Թիւրքերի աւազակութիւնը՝ խրախուսվում է։

Թիւրքիայի համաձայնութիւնը եւրոպացի ընդհանուր վերատեսուչներ նշանակելու, տեղական իշխանութիւնների վրա հսկելու համար,—հետ է վերցված։

Նորվեգիացի Հօֆը, Բիթլիսի, Վանի և միւս վիլայէթների վերատեսուչը, և հոլլանդացի Վեստենենկը Էրզրումից վերադարձել են Եւրոպա։

Գերմանական ազդեցութիւնը Թիւրքիայում միայն Հայաստանի արցունքները բերեց, որովհետև հայերը Թիւրքիայի կողմից «դաւաճաններ» են ճանաչված, որ մտածում են այն մասին, թէ ռուսները երբ կը մտնեն իրանց հայրենի գիւղերն ու շէները։ Գերմանացիները երիտասարդ-թիւրքերից ոչ պակաս ջանք են թափում անբաղդացնել Հայաստանը։

Նրանք դէմ կանգնեցին Հայաստանում երկաթուղի շինելու ծրագրին միայն նրա համար, որ այդ բանը տնտեսապէս կը բարձրացնէր անբաղդ երկիրը։ Հայ պատգամաւոր Փաստրմաճեանին, Հայաստանի երկաթուղու նախագծի հեղինակին, համարեցին «ոչ հայրենասէր»։ Յայտնի սոց.-դեմ. Պարվուս «Ժէօն Թիւրք» լրագրում մի շարք յօդուածներով դուրս եկաւ նոյն Փաստրմաճեանի դէմ։ Նա պաշտպանում էր գերմանական երկաթուղու նախագիծը, պաշտպանում էր երիտասարդ-թիւրքերի ամենայն կրքոտութեամբ, որ արհամարհում է հայերին։

Թւում է թէ եկել է ժամանակը, որպէսզի բոլոր հարցերի հետ միասին վերջ դրվի և չարաբաստիկ հայոց հարցին։ Այդ բանի համար, յամենայն դէպս, անհրաժեշտ է պատրաստվել։ Հայերը մեծից սկսած մինչև փոքրը ընդառաջ կը գան Ռուսաստանին։

Արդէն լսել են մտաւորականների վէճերն այն մասին, թէ Ռուսաստանը կատարեալ ազատութիւն կը բերի արդեօք հայերին։ Թէ Ռուսաստանին և թէ հայերին ժամանակ է գործել, որպէսզի ընդ միշտ տապալեն Թիւրքական դարաւոր ստրկութեան լուծը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՄԵՌՆՈՒՄ Է

«Հայ լեզուն մեռնում է»—ասում են բոլորը, այն մտածողները, որոնց համար թանգ և պաշտելի է մայրենի լեզուն։

Ահա քանի տարիներ է, որ կրկնվում են այդ խօսքերը, շատ պերճախօս փաստերով ապացուցվում է մայրենի լեզուի կարևորութիւնը, սակայն իրականութեան մէջ կարծէք ոչինչ չէ փոխվում, միևնոյն սառնասրտութիւնը, միևնոյն անտարբեր վերաբերմունքը չէ վերանում, և հայ լեզուն, հայ գրականութիւնը փոխանակ զարգանալու և ծաղկելու՝ ընդհակառակը քանի գնում, այնքան մոռացվում է և անպէտք համարվում։

Իսկապէս երևոյթը յուսահատական է այն պատճառով, որ մեր մատաղ սերունդը, մեր մտաւորականութիւնը (բացառութիւնները յարգում ենք), առաւել ևս համակված անտարբերութեան ախտով՝ դէպի մայրենի լեզուն, առաջին վարակիչ օրինակն են հանդիսանում։ Այդ երևոյթը, որ ինքնին դատապարտելի է, դեռ բաւական չէ, մեր նոր սերունդը բացի մայրենի լեզուն չը գործածելուց նաև արհամարհում է և երբեմն էլ ծաղրում։ Այո, հայ աշակերտը, հայ ուսանողը ծաղրում է իր սեփական մայրենի լեզուն։ Այս է մեր ներկայ տխուր իրականութիւնը, որին ցաւօք սրտի ականատես են մեր ազգային գրականութեան և մայրենի լեզուի ջերմ ջատագովները։

Մարդ ուղղակի ապշում է, երբ փորձում է համեմատութեան մէջ դնել ռուս և հայ հրատարակութիւնների նախաձեռնողներին։ Ռուսերէն հրատարակութիւնների ձեռնարկողն իր աշխատանքի պտուղները փառաւոր կերպով վայելում է, հայերէն հրատարակութիւնների նախաձեռնողը՝ օրհասական վիճակի մէջ հազիւ հազ քարշ է տալիս իր գոյութիւնը։ Եւ այդ՝ այն պատճառով, որ ռուսագէտ հայը կարդալով ռուսերէն՝ այլևս անտես է անում հայերէնը, կարիք չէ զգում հետաքրքրվել հայ գրականութեամբ ու կեանքով, որի հարազատ հայելին է հայ լրագրութիւնը։

Եւ ինչով բացատրել հայի ռուսերէն կարդալը. մենք ի հարկէ դէմ չենք, որ հայը ռուսերէն կարդայ, ինչպէս և չենք ժխտում ընդհանուր գրականութեան բարերար ազդեցութիւնը։ Մենք միայն մատնացոյց ենք լինում փաստը, որ շատ հեռու է մխիթարական լինելու, հայ գրականութեան և մեր մայրենի լեզուի զարգացման ու տարածվելու տեսակէտից։

Հայերէն կարդացողների ցանկալի թիւ չը լինելը ունի իր խոր պատճառները, որոնցից ամենագլխաւոր տեղն է բռնում բացակայութիւնն այն պայմանների, որոնք մի տեսակ խթան են ծառայում ընթերցանութիւնը տարրական պահանջ դարձնելու աշխատաւոր դասակարգի համար։

Մեր կարծիքով՝ ընթերցողների մի ստուար կոնտինգենտ կարելի կը լինի կազմել այն ժամանակ, երբ մենք ունենանք էժանագին հրատարակութիւններ։

Այդ կողմից մեզ օրինակ կարող են ծառայել ռուսերէն էժանագին հրատարակութիւնները։

Եւ պէտք է ասել, որ էժանագին հրատարակութիւնները գլխաւորապէս մուտք են գործում աշխատաւոր և գիւղացի դասակարգի մէջ, որի կրթվելը, իսկապէս, յոյժ ցանկալի է։

Մեզ գուցէ առարկողներ լինեն, թէ էժանագին հրատարակութիւնները վնաս կը բերեն իրանց նախաձեռնողներին՝ նիւթապէս. սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ ամեն մի գործ սկզբնական շրջանում վնաս է բերում, մինչև որ կարգին, կանոնաւոր հիմքերի վրա է դրվում և որը այնուհետև բեղմնաւոր արդիւնքներ է տալիս։

Ուրեմն մայրենի լեզուի ճոխացման և բեղմնաւորման մասին հոգացողների առաջին պարտականութիւնը պիտի լինի արտադրել էժանագին հրատարակութիւններ և ցրել հայութեան զանազան խաւերում, գլխաւորապէս գիւղերում, որտեղ հայ լեզուն կարող է հայ ոգով կրթել և ապագայում այդ լեզուի պաշտպաններ պատրաստել։

Ա. Ասլանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԵՐՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ*)

Այդպէս անցկացրեց Մագդալինան պատերազմի առաջին ամիսը։ Այնուհետև փոքր առ փոքր մեղմացաւ նրա հոգեկան փոթորիկը, և սովորական առողջ բանականութիւնը, որից զուրկ չէր, տակաւ առ տակաւ տիրացաւ իր սրբազան իրաւունքներին։ Վրէժի, ատելութեան և անզօր չարութեան քաօսի մէջ նա կարողացաւ գտնել արդարամիտ դատողութեան թելը և բռնեց նրա ծայրից տկար ձեռներով։ Ոչ այնքան գիտակցաբար, որքան բնազդաբար։

Նա մտածեց, որ անմտութիւն և խղճի դէմ դաւաճանութիւն է մէկ մարդու կամ մի քանիսի յանցանքը տարածել մի ամբողջ ազգի վրա։ Չէ որ մարդկային անհուն բազմութեան ճակատագիրն ամենուրեք գտնվում է մի բուռն անհատների ձեռքերում։ Չէ որ երբ իշխանները ու զօրաւորները հրամայում են, ծառաներն ու թոյլերը ստիպված են կատարել նրանց հրամանը, որքան էլ անմիտ, որքան էլ անհեթեթ լինի այդ հրամանը։

Ամեն օր նա դողդոջուն ձեռներով բաց անելով տեղական լրագիրը՝ նախ և առաջ աչքի էր անցկացնում սպանվածների և վիրաւորվածների անվերջ ցուցակները։ Երբ հասնում էր Մ. տառին, մի պահ կանգ էր առնում. նրա ձեռները թուլանում էին ու լրագիրը բաց թողնում ծնկների վրա։ Նրա տառապող սիրտը սկսում էր այնպէս ուժգին բաբախել, որ, կարծես, ձգտում էր դուրս պրծել կրծքի տակից ինչպէս նոր ձերբակալված թռչունը վանդակից։

* * *

Մի առաւօտ աղախինը, որ երեխաներին տարել էր իրանց տատի մոտ և նոր վերադարձել էր խոհանոց, յանկարծ լսեց մի բարձր ու սուր ճիչ։

Նա իսկոյն վազեց սեղանատուն, որտեղից լսվեց ճիչը։

Այնտեղ, լուսամուտի առջև, առաւօտեան արևգակի մեղմ ճառագայթների տակ, օրվայ լրագիրը ձեռքում՝ ձգված էր Մագդալինան անշնչացած։ Չարիքը գուշակելով, շփոթված աղախինը վազեց պատշգամբ և բարձրաձայն օգնութիւն կանչեց։ Ապա, վերադառնալով, չոքեց տիրուհու մօտ։

Եկան մի քանի հարևան կանայք, և աղախինը նրանց օգնութեամբ ուշքի բերեց Մագդալինային ու նստեցրեց թախտի վրա։ Նա գունատ էր ինչպէս ճերմակ կտաւ։ Նրա կապտած շրթունքները կպել էին ատամներին և դողդողում էին։

— Ի՞նչ պատահեց,—գոչեցին հարևան կանայք, արդէն լրագրից գուշակելով թէ ինչ կարող է պատահած լինել։

— Նրան սպանել են,—հազիւ կարողացաւ արտասանել Մագդալինան և նորից ուշաթափվեց։

Երբ նորից ուշքի բերեցին նրան, սկսեց դառնագին հեկեկալ, արտասանելով.

— Ես նախազգում էի, գիտէի, որ սպանվելու է։

Ոչ ոք չը խանգարեց նրա հեկեկանքը, զգալով որ նման դէպքերում մխիթարական խօսքերն անզօր են։

Աղախինը վազեց դժբաղդ լուրը Մագդալինայի ծնողներին յայտնելու, պատուէր տանելով երեխաներին ոչինչ չասել և չը բերել տուն։

Եկան ծնողները։ Մայրն իր հեկեկանքը խառնեց դստեր հեկեկանքին։ Իսկ հայրն ասաց, թէ լրագիրների ցուցակին հաւատալ չէ կարելի, թէ հարկաւոր է շտաբում տեղեկանալ։ Եւ ինքը շտապեց տեղեկանալու։

Կէս ժամ անցած նա բերեց դժբաղդ լուրի հաստատութիւնը։ Այո, շտաբում ստացված ցուցակի մէջ կայ մի պորուչիկ Լևոն Մաքսյեան անունով։ Սպանված է նա անկասկած Լվովի մօտ տեղի ունեցած ճակատամարտերից մէկում...

Մագդալինան պահանջեց, որ հեռագրվի այն զօրաբանակի հրամանատարին, որին պատկանում էր Լևոնի գունդը։

Երեք օր անցած ստացվեց հետևեալ հեռագիրը.

«Տեղեկացէք կովկասեան շտաբում»։

Այնտեղ կասկած չը մնաց։

Մագդալինան պահանջեց, որ Լևոնի դիակը գտնվի և Կովկաս բերվի։ Պահանջը համարվեց անիրագործելի։ Ասացին, որ պորուչիկը սպանված է 2 շաբաթ առաջ, որ անտարակոյս նրան թաղել են հէնց սպանման օրը, որ զուր կը լինի ամեն ջանք նրա դիակը գտնելու և այն և այլն...

Մագդալինան համոզվեց, որ, արդարև, իր պահանջն անիրագործելի է։ Նա բաւականացաւ սովորական հոգեհանգստով, հետևելով ուրիշների օրինակին։

* * *

Այլևս նա դադարեց հետաքրքրվել պատերազմով։ Այլևս հեռագիրներն ու լրագիրները կորցրին նրա աչքում իրանց նշանակութիւնը։ Միակ կենդանի կապը, որ կար նրա և սոսկալի արհաւիրքի միջև, կտրվեց։ Չը կայ այդ կապը. չը կայ և արհաւիրք։ Իսկ համայնական վիշտ կրելու համար նրա սիրտը տեղ չունի իր մէջ, այնքան խոշոր է անձնականը։

Եւ, խորասուզվելով ինքն իր մէջ, նա չը գիտէր՝ ինչ է կատարվում դրսի աշխարհում՝ և չէր էլ ուզում իմանալ։ Միակ բանը, որ նրան զբաղեցնում էր, բացի վշտից, երեխաների վիճակն էր։ Հարկաւոր էր նրանց ապահովութեան մասին հոգալ։ Երբ նրա հայրը գնաց ուր հարկն է տեղեկանալու, թէ ինչ կարգադրութիւն կայ սպանված օֆիցէրների որբացեալ ընտանիքների վերաբերմամբ, պատասխան ստացաւ, թէ տակաւին ոչ մի կարգադրութիւն չը կայ և թէ Բարձրագոյն Իշխանութիւնը անշուշտ որևէ հրաման կարձակէ շուտով...

Մագդալինան չը բողոքեց։ Նա արեց այն, ինչ որ կարող էր անել. կրճատեց իր ծախքերը մինչև մինիմում։

Ով-որ նրան ասաց, թէ պատերազմում սպանվածների մերձաւորները որոշել են սգազգեստ չը հագնել հասարակութեան տրամադրութեան վրա չը ներգործելու համար։ Նա վրդովվեց, ասելով թէ ոչ ոքի վզին չի ուզում փաթաթել իր վիշտը և թող ոչ ոք էլ չը խանգարի նրան իր վիշտը կրելու այնպէս, ինչպէս ինքն է կամենում։ Եւ իր խօսքին հաւատարիմ մնալով, նա դադարեց տնից դուրս գալ ծանօթներին չը հանդիպելու համար։ Նա դադարեց այցելել նոյնիսկ իր ծնողներին ու քոյրերին, որոնց կարեկցութիւնը նրան աւելի գրգռում էր, քան սփոփում։ Նա չէր ուզում անգամ ոչ ոքի ընդունել և չէր թագցնում իր դժկամութիւնը, երբ մերձաւորներն այցելում էին իրան։

Նա մեծացնել տուեց Լևոնի ամենաաջող լուսանկարը, որ նկարված էր դեռ ամուսնութիւնից առաջ, դրեց սև շրջանակի մէջ և կախեց պատի վրա, Լևոնի գրասեղանի վերև։ Եւ դա եղաւ նրա ամենասիրելի ընկերն ու խօսակիցը։ Երեխաներից թագուն նա նստում էր այդ լուսանկարի առջև, երբեմն ժամերով, նայում էր, նայում, հառաչում, արտասւում մեղմիկ, դարձեալ նայում։ Մերթ ընդ մերթ նկարն այնքան կենդանանում էր, որ, կարծես, շունչ էր առնում և ձգտում էր դուրս գալ շրջանակից։ Այդպիսի րոպէներին Մագդալինայի հոգու խորքից բարձրանում էր կասկածի թէ յուսոյ նման մի բան և պաշարում նրան։ Թւում էր նրան, որ ինքն և ամենքը մոլորութեան մէջ են, որ կատարում են յանցանքի հաւասար մի սխալ, կարծելով թէ Լևոնը մեռած է, որ խելառութիւն էր այդպէս շուտ, առանց ստուգելու հաւատալ նրա սպանմանը։ Բայց անցնում էին րոպէները և ցնորքը չքանում էր՝ տեղի տալով կատարված իրողութեանը...

* * *

Մի անգամ—պատահեց այս հոգեհանգստից մի ամիս անցած—Մագդալինան ննջարանում կրտսեր երեխայի համար շապիկ էր կարում, երբ Գարիկը սովորական աղմուկով յանկարծ ներս վազեց՝ գոչելով.

— Մամա, այնտեղ մի մարդ ուզում է քեզ տեսնել։

— Ո՞վ է։

— Չը հարցրի։

Մագդալինան կարը դրեց մի կողմ, հանդարտ վեր կացաւ և դուրս եկաւ սենեակից։

Պատշգամբի վրա կանգնած էր մի անծանօթ «Կարմիր Խաչի» հողագոյն համազգեստով, աջ թևի վրա խաչի նշանը։

— Ի՞նչ էք կամենում,—հարցրեց Մագդալինան։

— Տիկին, դոկտոր Վարազդանովը ձեզ խնդրում է շնորհ բերել իր մօտ։

— Ո՞վ է դոկտոր Վարազդանովը։

— Հիւանդանոցի կառավարիչը։

— Ի՞նչ գործ ունի նա ինձ հետ։

— Չը գիտեմ,—պատասխանեց անծանօթը, երեսը մի կողմ դարձնելով և նկատելու աստիճան շփոթվելով։

— Ասացէք դոկտորին, որ ես ժամանակ չունեմ տնից դուրս գալու, մանաւանդ որ ծանօթ չեմ նրա հետ։

— Բայց, տիկին, գործը շատ կարևոր է և ձեզ է վերաբերում,—արտասանեց անծանօթը, նորից շփոթվելով։

---

*) Տես «Մշակ» № 232։

ԾԽ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՈՎԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄՈՒՄ

—

Խանքենդ, 6 հոկտեմբերի

Թեմիս կառավարիչ Զաւէն վ. ամառվայ վերջը մի երկու անգամ դուրս եկաւ և պտտեց Վարանդայի և Խաչէնի շրջանները, ամեն անգամ մի քանի օր մնալով, միւս կողմից՝ նախկին թեմական տեսուչ Գուրգէն Հայկունին՝ իր շրջագայութիւնների ժամանակ, և երրորդ կողմից՝ Ամարասի վանահայր Սուրէն աբեղան՝ եռանդուն գործունէութեամբ Վարանդայի և Խաչէնի նոյն իսկ ամենայետ ընկած գիւղերում յորդորեցին և դպրոց բաց արին։

Եւ ահա, զուցէ և ստիպված, որ ուսուցիչներ չը կան, այդ դպրոցներում կարգադրում են ուսուցիչներ նշանակել պատահածին անխտիր, առանց ցենզի վրա ուշադրութիւն դարձնելու։ Սակայն ովքե՞ր են նշանակվում. Էլ թեմական դպրոցի IV դասարանում երկու տարի մնացած և վռնդված, էլ V դասարանում մնացած և հեռացած, էլ քաղաքային դպրոցաւարտ, էլ Շուշու Մարինսկին (ռուսական օրիորդաց դպ.) աւարտած (IV դ.) օրիորդներ։ Մի խօսքով, ով խնդիր է ներկայացրել և տեղ է խնդրել, անխտիր կերպով տեղաւորել են։ Ընդունենք ակամայից, որ թեմական դպրոցի IV կամ V դասարանից կարելի է ծխական դպրոցի համար ուսուցիչ ընդունել, որովհետև նրանք քիչ թէ շատ ծանօթ են մայրենի լեզուին, պատմութեանը, կրօնին։ Ապա ինչպէս ընդունել մի քաղաքային դպրոցաւարտի կամ մի Մարինսկի աւարտած օրիորդի հայոց ծխական դպրոցում։

Բոլորս էլ գիտենք, որ Վարանդայի և Խաչէնի շրջաններում շատ հազուագիւտ գիւղեր կան, ուր իւրաքանչիւր դպրոցում երկու ուսուցիչ կայ, մնացածները մեծ մասամբ մի ուսուցչով են ղեկավարվում և միդասեան են, և որովհետև դպրոցի առարկաների մեծագոյն մասը հայերէն է, ի հարկէ ուսուցիչը առնուազն պիտի թեմականաւարտ լինի։ Բայց մենք ներկայումս տեսնում ենք՝ հայկական ծխական դպրոցի ուսուցիչ - ուսուցչուհիների պաշտօնում՝ քաղաքային և Մարինսկի դպրոցաւարտներ, որոնք մեր կարծիքով՝ անհամապատասխան են այդ պաշտօնին։ Ինչու. շատ հասկանալի է, որովհետև հայերէն չը գիտեն։ Օրինակի համար. այս տարվայ քաղաքային դպրոցի շրջանաւարտներից մէկին, որը համարվում էր աչքի ընկնող և առաջադէմ աշակերտ, կրօնի վերջնական քննութեան ժամանակ «Հայր մերը» պահանջում են, որ ասի. նա, բաւական չէ որ չէ իմանում, դառնում և ուսուցչին ասում է՝ «չենք սովորել» (այդ ինքն է ինձ պատմել)։ Նոյն աշակերտը նոյն իսկ հայերէն ուղիղ գրել չը գիտէր։ Եւ դա դեռ այս տարվայ շրջանաւարտների մէջ աչքի ընկնող առաջադէմն է... Նոյն— կարելի է ասել՝ աւելի վատ—օրն են և Մարինսկի օրիորդները։

Թէ ինչ են մտածել, որ այդպիսիներին նշանակել են պաշտօնավարելու ծխական դպրոցներում, անյայտ է։ Y.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» խմբագրութիւնը պարտք է համարում յայտնել, որ ներկայ հոկտեմբերի 26-ին Ալէքսանդր Բալանթարի մահարձանի բացման հետ միաժամանակ տեղի կունենայ նոյն օրը նաև «Մշակի» հանգուցեալ հրատարակիչ Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահարձանի բացումը։ Թէև հանգուցեալի մահվան տարելիցը եղել է աւելի վաղ, բայց մահարձանի պատրաստութեան յապաղման պատճառով որոշված էր յետաձգել բացումը և կատարել Ալ. Բալանթարի մահարձանի բացման հետ միաժամանակ։

◆ Փոխարքան թոյլատրել է Գեղարուեստը Խրախուսող Կովկասեան Ընկ. 1000 ր. վիճակախաղ կազմել յօգուտ պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտէի։

◆ Թիֆլիսի այգեգործական դպրոցը երկրագործութեան գլխաւոր վարչութիւնից պատուէր է ստացել, որով պահանջվում է 50 պուդ չորացրած դափնի տերև պատրաստել զօրքի կարիքների համար։ Դպրոցը այդ պահանջը յանձնել է Բաթումի Գիւղատնտեսական Ընկերութեան։

◆ Վաճառականներ Մ. Ա. Գորգիջանով և Ա. Ա. Արզմանեան ցանկութիւն են յայտնել պատերազմի տևողութեան ամբողջ ընթացքում մի-մի մահճակալ պահել վաճառականների հիմնած լազարէթում։ Թիֆլիսի ժողովարանի ծառայողները որոշել են իրանց ստացած ռոճիկներից ամսական 1% յատկացնել վաճառականների հիւանդանոցի օգտին։

◆ Ուրբաթ, հոկտեմբերի 17-ին, կը կայանայ պատերազմից վնասվածներին օգնութիւն ցոյց տուող քաղ. կենտ. կոմիտէի նիստը։

◆ Պետրոգրադի վրայով Գերմանիայից վերադարձել է քաղ. դումայի իրաւաբան Կ. Ս. Սարգսեան։

◆ Մեզ հաղորդում են, որ Կ. Հ. Բ. Ը. դահլիճում հոկտ. 9-ին կայացած հայ գրողների, գրականագէտների և հրապարակախօսների ժողովի շարունակութիւնը յօգուտ պատերազմից վնասվածների մի գրական-գեղարուեստական ալմանախ հրատարակելու մասին՝ տեղի կունենայ ուրբաթ, հոկտեմբերի 17-ին, Գրական-Գեղարուեստական Սալոնում երեկոյից յետոյ։

◆ Թիֆլիսում գտնվող՝ Պետ. Դումայի անդամ Մ. Աջէմեանը, որ քիչ չէ նպաստել կովկասեան պոլիտեխնիկումի հարցի լուծման, այս օրերս այցելեց քաղաքագլխին և երկարատև խօսակցութիւն ունեցաւ նրա հետ զանազան հարցերի վերաբերմամբ։ Քաղաքագլխի հետ միասին Աջէմեանը մանրամասն դիտեց քաղաքային զանազան հիմնարկութիւնները, ապաստանը, հիւանդանոցները, պոլիտեխնիկումը, Ժողովրդական Տունը և այլն։ Քաղաքային հիմնարկութիւնները գեղեցիկ տպաւորութիւն են թողել Աջէմեանի վրա։ Առանձնապէս ուշադրութիւն դարձվեց հիւանդանոցային հիմնարկութիւնների, ինչպէս և այն հարցի վրա, որ մօտ ապագայում կարելի է բժշկական ֆակուլտէտ բանալ Կովկասի պոլիտեխնիկումին կից։ Աջէմեանը այն կարծիքն է յայտնել, որ քաղաքը այսքան հիւանդանոց ունենալուց յետոյ՝ բժշկական ֆակուլտէտի բացումը միանգամայն հնարաւոր է հանդիսանում, որովհետև ուսանողները բաւականաչափ գործ կունենան գործնական պարապմունքների համար։ Աջէմեանի կարծիքը, որպէս լուսաւորված բժշկի կարծիք, ներկայ դէպքում առանձնապէս գնահատելի է հանդիսանում։ Աջէմեանը Թիֆլիսից կը մեկնի հոկտ. 17-ին։

◆ Փայտավաճառները դիմել են քաղաքագլխին, խնդրելով աւելացնել փայտի սակագինը, որովհետև գոյութիւն ունեցող սակագինը (խորանարդ սաժ. 52 ր.) վնաս է իրանց համար։

◆ Մարդատար գնացքների երթևեկութիւնը Կախէթի երկաթուղով սկսվելու է նոյեմբերի 17-ից։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Գանձակից յայտնում են, որ առանձին կարևոր գործերի քննիչ Անտօնովի որոշումով պահնորդութեան տակ է առնված եղբ. Ֆորէրի Գանձակ. կայարանի գինու պահեստի կառավարիչ Ադոլֆ Ֆորէր, որ մեղադրվում է զօրքի կարիքների համար բաց թողած գինու առողջութեան համար վնասակար խառնուրդներ խառնելու մէջ։ Եղբ. Ֆորէրի պահեստում, բացի այդ, գտնըված է մի քանի հազար գրադուս սպիրտ, որ ակցիզի կողմից չէ թոյլատրված։ Հետագայ քննութիւնները կատարում է առանձին կարևոր գործերի դատական քննիչ Կոտօլևիլ, որ յատկապէս ուղարկված է Թիֆլիսից։

◆ Մեծ-Ղարաքիլիսայից յայտնում են մեզ, որ ղարաքիլիսեցի հանգուցեալ Ալ. Թայիրեանի այրի Իւ. Մ. Թայիրեան իր հաշւով Մեծ-Ղարաքիլիսայում հոկտ. 5-ին բացել է «Նասլի» (Մսուր) անունով մի ապաստարան պահեստների երեխաների համար։ Ապաստարանի բացման օրը ողջոյնի հեռագիր է ուղարկվել կոմսուհի Ե. Ա. Վօրոնցով-Դաշկովային։ Ի պատասխան այդ հեռագրի տիկ. Իւ. Մ. Թայիրեան կոմսուհուց ստացել է հետևեալ հեռագիրը. «Ուրախ եմ մանկական ապաստարան բացելու տեղեկութեամբ, որ այնքան անհրաժեշտ է ներկայ ժամանակում։ Ամուսինս և ես շնորհակալ ենք ձեզնից և ներկաներից մեզ յիշելու և ողջոյնների համար»։

◆ Կովկասի մի շարք քաղաքներից տեղեկութիւններ են ստացվել Կովկասի քաղաքների միութեան բիւրօյում, որ հոկտեմբերի 19-ին «սպիտակեղէնի շաբաթ» է կազմակերպվելու իրանցում։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Այս օրերս Մոսկվայի դատաստանական պալատում քննվել է Մոսկվայում լոյս տեսնող «Մարտ» շաբաթաթերթի խմբագիր Թումանեանի գործը՝ հայ հասարակութիւնը իր հոգևորականութեան դէմ գրգռելու վերաբերմամբ։ Նա արդար է ճանաչվել։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—o—

Օպերա

Հոկտ. 14-ին Արքունական թատրոնում ներկայացվեցին «Շինական պատիւ» և «Паяцы»։ Անսամբլը աջող էր։ Աչքի ընկան Իվօնի, Նեստէրէնկո, Միխայլով, Բոգինսկի։

—

◆ Այսօր օպէրային gala ներկայացումն է. կը տրվի «Տաիսը»։

◆ Վաղը Ժողովրդական Տանը ռուս դրամատիկական թատերասէրների խումբը խաղալու է իշխ. Սումբատովի «Старый закалъ» պիէսը, որի նիւթը վերցված է զինւորական կեանքից։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Հայոց ներկայացումները Բագւում

Բագու, 12 հոկտեմբերի

Հայոց երրորդ ներկայացումը, որ տրվեց հոկտ. 11-ին, Մոլիէրի «Դոն-Ժուանը» եղաւ, Իփէկեանի թարգմանութեամբ։ Ցայտարարված էր, որ պիտի խաղացվի մի նոր թարգմանական պիէս, Ս. Բէնէլլիի «Ծաղրանքի ընթրիքը», սակայն դերասանուհիներից մէկի հիւանդութեան պատճառով, դա անիրագործելի եղաւ և յանպատրաստից բեմ հանվեց ֆրանսիացի հռչակաւոր կատակերգուի գործը։

Մոլիէրը 17-րդ դարում հմուտ վարպետ է եղել իր շրջապատի պատկերացման մէջ։ Կղերականութեան կեղծաւորութիւնն ու սնոտիապաշտութիւնը, ազնուականութեան դատարկապորտութիւնն ու արկածախնդրութիւնը, քաղքենիութեան բթամտութիւնը և խոնարհութիւնը տիրող դասերի առջև, մի խօսքով Ֆրանսիական հասարակական խաւերի ներկայացուցիչները իրանց դասին պատշաճ յատկութիւններով ու ապրումներով մարմնաւորութիւն են ստացել մեծ քերթողի գրչով։ Մոլիէրը ծաղրում էր իր հայրենակիցների արատները, բայց նրա ծաղրը և թաքուն կսկիծ էր պարունակում իր մէջ։ Նա տեսնում էր, որ Ֆրանսիան գալարվում է աւատական կարգերի ծանրութեան տակ, ուստի և ոչ միայն պատկերացնում էր շահատակողներին, այլ և արժանի պատիժ էր յօրինում նրանց համար։ Մոլիէրը այն գրողների կարգին է պատկանում, որոնց երկերում արատը վերջ ի վերջոյ պատժվում է, իսկ առաքինութիւնը վարձատրվում։ Դա, հարկաւ, անհրաժեշտ մեթոդ պէտք է լինէր 17-րդ դարի Ֆրանսիայում, երբ հասարակական լայն շարժումով դժուար էր բողոքել տիրող կարգերի դէմ։ Մոլիէրի «Դոն-Ժուանը» գրված է նոյն այդ բարոյակրթական պահանջներին համապատասխան։ Երիտասարդ ազնուականը արկածների մէջ է անցկացնում իր կեանքը, մի շարք յանցանքներ է գործում, գայթակղեցնում է դեռատի աղջիկներին, օգտվում նրանցից ու թողնում, պարտքեր է անում և չը վճարում, այնքան է սանձարձակվում, որ հիւր է կանչում իր ձեռքով սպանված հրամանատարի արձանը և նրա այցելութեամբ վերջ գտնում իր մրրկայոյզ կեանքին։ Այստեղ պարզ է գրողի ձգտումը. պատկերացնել հացկատակ և անաշխատ կեանքով ապրող ազնուականին և գրական խարանով դատապարտել նրա գոյութիւնը։

«Դոն-Ժուանի» մէջ երկու կենտրոնական տիպ կայ. մէկը Դոն-Ժուանն, միւսը նրա ծառայ Սգանարէլը։ Պիէսի մնացած գործողները գալիս են պահ մի վկայելու Դոն-Ժուանի անցուդարձերով հարուստ կեանքը և չքանում։ Այս պատճառով խաղի ծանրութիւնը ընկնում է այն դերասանների վրա, որոնք կատարում են մեր յիշած կենտրոնական տիպերի դերերը։ Այս անգամ Դոն-Ժուանի դերում հանդէս էր եկել Վ. Փափազեան, իսկ Սգանարէլ էր Մ. Թաշճեան։

Վ. Փափազեանը փայլուն խաղ ցոյց տուեց։ Նա ամբողջովին արկածախնդրութիւն էր, ամբողջովին գայթակղութիւն իր շարժումներով ու խօսքով։ Դոն-Ժուանի մտքի ու գործի ճկունութիւնը, նրա հնարամտութիւնը, հարուստ ֆանտազիան նորանոր դերեր ստանձնելու՝ այդ բոլորը լիակատար կերպով արտացոլվեց դերասանի խաղում։ Մ. Թաշճեանը պակաս շնորհքով օժտված Սգանարէլ չէր. նա ըստ հարկին դիմազուրկ ծառայ էր, բայց և խրատատու մենտոր, երբ այդ պահանջվում էր։ Տէրն ու ծառան լաւ էին թափանցում իրարու ոգին։ Թաշճեան-Սգանարէլը հաճոյակատար էր, բայց ճանաչող արատն ու առաքինութիւնը։ Թաշճեանի խաղը ըստ ամենայնի շնորհալի էր։ Մնացած դերակատարներից լաւ էին տ. տ. Սրուա-Ոսկանեան (Շարլօտ) և Գուլազեան (Մատիւրին)։ Նկատելի էր, որ դերասաններից ոմանք չէին սերտել դերերը։ Նրանք սայթաքվում էին արտասանութեան մէջ և յուշարարի բերնից էին կրկնում իրանց ասելիքը։

Թատրոնում մարդ քիչ կար, զարմանք ազդելու չափ քիչ։ Միայն ցաւել կարող ենք, որ բագուեցիները առիթ փախցրին տեսնելու Վ. Փափազեանի այնքան վարպետօրէն խաղացած Դոն-Ժուանը։ Դ. Ա.

—

Բագւում անցեալ շաբաթ ներկայացվել է Շիրվանզադէի «Նամուս» պիէսը։ Այդ առթիւ, նոյնպէս նոյն հեղինակի ուրիշ պիէսները ներկայացնելու առթիւ, մի խումբ պարոններ որոշ թերթերում աշխատում են ամեն կերպ հալածել Շիրվանզադէի պիէսները և անվերապահ լեզուով խօսել նրանց հեղինակի մասին։ Բայց ահա թէ ինչ է գրում «Каспій»-ի մէջ Ս. Այվազեան, որ յայտնի է որպէս խստապահանջ ճաշակի տէր մարդ, «Նամուսի» ներկայացման առիթով.

«Եւ մեծ մասամբ դժուար է ասել, թէ ինչն էր այստեղ աւելի բարձր, դերասանների խա՞ղը, արդեօք թէ ինքը պիէսը կենդանի բովանդակութեամբ և հանդիսատեսների համար մօտ շրջանի՝ Շամախու հայերի կեանքից։

«Ուրիշ նման գեղարուեստական-կենցաղագրական դրամա չունեն հայերը իրանց ողջ բեմական գրականութեան մէջ։ Շիրվանզադէի «Նամուսի» հետ, բացառութեամբ նրա փոքր ինչ մելոդրամատիկ վերջաւորութեան, չեն կարող մրցել անգամ, զուցէ, այնպիսի կլասիկական դրամաներ, ինչպիսիք են հանգուցեալ Սունդուկեանի «Պէպօն» և «Քանդված օջախը»։

ՄԱՄՈՒԼ

Վրաց թերթերը և հասարակական կարծիքը խորապէս վրդովված են մի հարցով. հայ մամուլի մի օրգան, ինչպէս երևում է՝ տպել է իր համարներից մէկում մի նամակ Կ. Պոլսից, որի մէջ խօսելով թէ Թիւրքերի երևակայութիւնը գրգռվեց, երբ գերմանացիները Աւգուստովոն առան, հետևեալ խօսքերն է գրել վրացիների մասին.

Ու հա՛ս, Պոլսոյ փողոցներուն մէջ երեւցան զանազան կասկածելի փախփախներով, չալմաներով, խէնջարներով անձեր— քիչ մը թաթար, քիչ մը չանթժախթ։ Նոյնիսկ երեւան եկան մէկ-երկու խայտագողներ—Թուրքեթի պետական գանձարանը կողոպտողներ (ինչպէս ինծի հաղորդեց բանիմաց կովկասցի հայ մը)... Ու ասոնք սկսան փսփսուքներ զանազան մութ մարդերու հետ, այն ալ խեղճ վրացի ժողովրդին անունով, որ այս սրիկաներու գոյութիւնէն անգամ լուր չունի։ Կըսուի թէ ասոնցմէ մէկ երկուքը ճարպիկ փրթեցան Իթթիհատէն քանի մը հարիւր ոսկի փրցուցին ու կծիկը դրին դէպի Եւրոպա, ուր կերան Թուրքեթի պետական գանձը կամ Երևանեան հրապարակի վրայ կողոպտած հսկայական գումարները։

Տեղական «Кавк. Слово» լրագիրը շտապել էր արտատպել յիշեալ տեղեկութիւնը։ Եւ ահա վրաց մամուլը ինչ է պատասխանում։

«Սախալխո Գազէթին» իր մի յօդուածում («...-ի պրովոկացիան») «Кавк. Сл.»-ից առաջ բերելով հայ թերթի վերոյիշեալ հատուածը, գրում է հետևեալը.

Այս տեղեկութեան առիթով... լրագրին պէտք է ասենք հետևեալը։ Մենք խորապէս համոզված ենք, որ հայ շովինիստների օֆիցիօզը այնքան է լաւ ուսում-

---

Մագդալինան նայեց նրա երեսին խորը հայեացքով, զգալով ինչ-որ տարօրինակ կասկած։

— Ինչպէս երևում է, դուք գիտէք՝ ինչու համար է ինձ կանչում դոկտորը,—ասաց դրական եղանակով։—Ինչու էք թագցնում, ասացէք։

— Տիկին, գուցէ գիտեմ, բայց ինձ իրաւունք չէ տրված ասելու։ Եկէք և ինքներդ տեսէք։ Ես արդէն կառք եմ բերել ձեզ համար։ Կէս ժամում նա մեզ կը հասցնէ հիւանդանոց։

— Շատ լաւ,—արտասանեց Մագդալինան, արդէն զգալով, որ պիտի լսէ մի անսպասելի լուր՝ կամ շատ տխուր կամ շատ ուրախ։

Եւ շտապով հագնվեց ու դուրս եկաւ անծանօթի հետ։

Ճանապարհին նա այլ ևս ոչ մի հարց չը տուեց, վախենալով լսել մի վատ բան...

Կէս ժամ անցած քաղաքի ծայրում կառքը կանգ առաւ մի մեծ շինութեան առջև, որ բաղկացած էր մի քանի մասերից։

Կարմիր խաչ կրողը նրան առաջնորդեց ընդարձակ բակով դէպի մէկը այդ մասերից և հրաւիրեց ներս մտնել։

Ընդունարանում, ուր նստած էին մի քանի կանայք տխուր դէմքերով, ձեռներում ունենալով զանազան կապոցներ, նրան դիմաւորեց մի բարձրահասակ մարդ շատ նիհար դէմքով և ալեխառն միրուքով։

— Ներեցէք, տիկին,—ասաց նա, որ ինքը դոկտոր Վարազդանովն էր,—որ ես ձեզ նեղութիւն պատճառեցի, բայց այդ իմ կամքովը չէր, այլ...

Դոկտորը մի վայրկեան կանգ առաւ, տատանվեց, ապա իր չոր-չոր ու երկայն մատներով ուղղելով ակնոցը՝ աւելացրեց.

— Նախ քան միւս սենեակ անցնելը, պատրաստվեցէք լսելու մի շատ ուրախ լուր... Ձեր ամուսինը, որին սպանված էիք համարում, կենդանի է։

— Կենդանի՞ է,—գոչեց Մագդալինան ոչ այնքան չը հաւատալով լուրին, որքան իր լսողութեանը։

— Այո, տիկին, կենդանի է և գտնվում է հարևան սենեակում։

— Բայց, դոկտոր, դուք այդ ուրախ լուրն այնքան էլ ուրախ եղանակով չէք հաղորդում ինձ...

— Մենք բժիշկներս պարտաւոր ենք նման դէպքերում թագցնել և՛ մեր ուրախութիւնը և՛ մեր տխրութիւնը,—խոյս տուեց ուղիղ պատասխանից դոկտոր Վարազդանովը։

— Ես ուզում եմ նրան տեսնել իսկոյն և եթ,—գոչեց Մագդալինան, քայլերն ուղղելով դէպի դռները։

— Մի րոպէ,—արգելեց բժիշկը, բռնելով նրա թևը։

Նա գնաց հարևան սենեակը, դռները ծածկելով իր ետևից։ Մի րոպէ չանցած, վերադառնալով, ասաց.

— Այժմ կարող էք գնալ։ Միայն խօսք տուէք, տիկին, որ ինչ որ էլ տեսնէք, պիտի զսպէք ձեզ և աշխատէք չը սաստկացնել ձեր ամուսնու յուզմունքը։ Տալիս էք ազնիւ խօսք։

— Տալիս եմ,—ասաց Մագդալինան դրական եղանակով, հազիւ զսպելով իրան։

Դոկտորը, դռները բաց անելով, ասաց.

— Մտէք։

Սենեակը, ուր մտաւ Մագդալինան, բաւական ընդարձակ էր և խիստ լուսաւոր։ Երկու լուսամուտներից՝ մէկի առջև, ձիւնի նման ճերմակ պատի տակ դրված էր մի մաքուր անկողնակալ։

Ներս մտնելով, Մագդալինան մի վայրկեան նայեց աջ ու ձախ, առաջին պահ ոչինչ չը նկատելով լուսոյ առատութեան պատճառով։ Գթութեան քոյրը, որ լուռ կանգնած էր լուսամուտի առջև, գլխի նշանով ցոյց տուեց նրան անկողնակալը։

Մագդալինան մօտեցաւ։ Այնտեղ պառկած էր Լևոնը, ճերմակ վերմակով ծածկված մինչև կոկորդը։ Նա լուռ ժպտում էր այն վայրկեանից, երբ Մագդալինային տեսաւ։ Եթէ չը լինէր այդ բնորոշ ժպիտը, որ երևան հանեց նրա գեղեցիկ ատամների շարքը, հազիւ թէ Մագդալինան առաջին պահ նրան Լևոնի տեղն ընդունէր, այնքան կերպարանափոխված էր պորուչիկը։ Նրա միրուքը բաւական երկարացել էր և տեղ-տեղ ճերմակել։ Նրա մի ժամանակվայ լիքլիք զուարթ դէմքը նիհարել էր, դունատվել և ծածկվել խորը խորշերով։

Յիշելով դոկտոր Վարազդանովին տուած խօսքը, Մագդալինան ճիգն արաւ և կարողացաւ զսպել այն սուր ճիչը, որ պատրաստ էր դուրս ժայթքելու ամիսուկէսվայ տառապանքներից յոգնած կրծքից։

Նա միայն արտասանեց.

— Լևոն...

Եւ, թեքվելով, համբուրվեց նրա հետ։

— Նստիր,—ասաց Լևոնը առաջվայ խռպոտ բարիտոնով, որ սակայն մի փոքր վայրենացած թւաց Մագդալինային։

Գթութեան քոյրն աթոռ մօտեցրեց և ինքը շտապեց դուրս գալ սենեակից։ Մագդալինան նստեց։

— Դէհ, պատմիր, այդ ի՞նչ սոսկալի թիւրիմացութիւն էր,—արտասանեց նա յուզված ձայնով, հազիւ կարողանալով երևալ արի։—Ես քեզ սպանված էի համարում։

— Գիտեմ, դու մինչև անգամ հոգեհանգիստ ես կատարել և սգազգեստ հագել։ Բայց նախ և առաջ ասա, երեխաներն առողջ են։

— Առողջ են։

— Իմ սպանման լուրը,—ասաց Լևոնը, մի քանի վայրկեան լռելուց յետոյ,—այն հասարակ սխալներից է, որ շատ սովորական են պատերազմի, մանաւանդ այդպիսի պատերազմի ժամանակ։

— Իսկ դու, որ գիտէիր, թէ ի՛նչ վիշտ կարող է ինձ պատճառել քո մահվան լուրը, ինչու չը հերքեցիր։

— Ես սխալն իմացայ այն ժամանակ, երբ հերքելն ուշ էր, որովհետև իմ հերքումից առաջ ես կարող էի այստեղ գալ։

— Բայց ինչու վերջին ժամանակները նամակ չէիր գրում։

— Չէի կարող գրել, որովհետև շարունակ կռիւների մէջ էի։

— Դու ծա՞նր ես վիրաւորված։

Լևոնը տատանվեց իսկոյն պատասխանելու։ Հայեացքը հեռացնելով Մագդալինայից, նա արտասանեց.

— Իմ վէրքերն արդէն բուժվել են։

— Բոլորովի՞ն...

— Բոլորովին,—պատասխանեց Լևոնը ծանր հառաչելով, և նրա աչքերը լցվեցին արցունքով։

— Բայց ինչու համար ես այստեղ պառկած։ Ինչու ուղղակի տուն չես եկել։ Լևոն, դու արտասվում ես, ինչ գաղտնիք ունես, ասա։

— Ոչինչ, ոչինչ,—արտասանեց Լևոնը, աշխատելով ժպտալ արցունքի միջից։

— Ոչ, ոչ, ասա։ Կայ մի բան, որ ինձանից թագցնում ես։ Ես զգում եմ այդ։ Դու ինձ խաբել չես կարող։ Ասա, ես ուզում եմ իմանալ՝ ինչ էլ որ լինի, հասկանում ես, ինչ էլ որ լինի։

— Խօսք տուր ինձ, որ դու կը զսպես քեզ եթէ յայտնեմ։

— Տալիս եմ։

— Խօսք տուր ինձ, որ չես զզվի ինձանից, ինչ որ էլ տեսնես։

— Լևոն, դու վիրաւորում ես քեզ և ինձ։

— Բաց արա մի փոքր կուրծքս։

Մագդալինան զգուշութեամբ մի փոքր հեռացրեց Լևոնի կրծքից վերմակի ծայրը։ Հողագոյն կիտելի վրա երևաց մի սպիտակ խաչ։

— Այդ ինչ խաչ է,—հարցրեց Մագդալինան։

— Սուրբ Գէորգի շքանշանը։

— Դու շքանշան ես ստացե՞լ,—ասաց Մագդալինան ուրախանալով,—դրա համար ես քեզ միայն համբուրել կարող եմ։

Եւ, թեքվելով, երկու անգամ համբուրեց Լևոնին, որ աղերսական հայեացքով նայում էր նրան։

— Ուրեմն դու հերոս ես,—գոչեց նա զգացված։

— Գուցէ։

— Պատմի՛ր։

— Մի փոքր էլ ցած քաշիր վերմակը, և կը լսես իմ պատմութիւնը։

Մագդալինան վերմակն աւելի ցած բերեց, նայեց։ Նոյն վայրկեանին մի սուր և երկարատև ճիչ դուրս թռաւ նրա կրծքից։

Նրա գլուխն անզօրացած ընկաւ Լևոնի կրծքի վրա։

Կիտելի թևերը ուսերից ցած էին ընկած դատարկ, ինչպէս լաթի կտորներ։

Լևոնի կռները մինչև արմատ կտրած էին։

Երբ ներս վազեց գթութեան քոյրը և Մագդալինային ուշքի բերեց, Լևոնը հեկեկում էր փոքրիկ մանկան պէս։

— Լաց մի լինիր,—արտասանեց Մագդալինան,—մեր երկուսի համար մի զոյգ ձեռներն էլ բաւական են...

Շիրվանզադէ

Թիֆլիս, 1914 թ. 13 հոկտ.

նախրած քաղաքական շանտաժը, որ նա հեշտ կերպով կարող է վրաց ազգի բարի և չար կամեցողներին երևան հանել բոլոր այն տեղերում, որտեղ համնում է հայ բուրժուազիայի փողը և հայ Դաշնակցութիւնը:

Սակայն բանը նրանումն է, որ վրաց ազգը իր շահերի պաշտպանութիւնը դեռ ևս չէ յանձնել նրան: Վրաց ժողովուրդը լաւ գիտէ, որ ...-ի Թափած արցունքները կոկորդիլոսի արցունքներ են, իսկ նրա արտացաւութիւնը այնքան գին ունի, որքան հայ չարչիի տուած մուրհակը: Վրաց ժողովուրդը իր շահերը պաշտպանում է պատերազմի դաշտում արիւնով և զէնքով: Եւ այս արեան իրաւունքով խնդրում է «խաչագողներից», որ ձեռքերը մի քիչ հեռու պահեն: Իսկ այն դիպլոմատներին, որոնք նստած են «Кавк. Слово»-ի խմբագրատանը, պէտք է ասենք հետևեալը: Վրաց ժողովրդի պատիւը պաշտպանելու գործում նրանց երկդիմի նկատողութիւնները միանգամայն աւելորդ են:

Աւելի լաւն այն կը լինէր, որ երիտասարդ լրագիրը իր տեղեկութիւնները հայ Թերթի ինֆորմացիոնային բամբասաւոր բիւրօյից չը վերցնէր, որովհետև այդ հայ Թերթի զօրեղ էֆէկտները՝ դէպի վրաց ժողովուրդը արդէն յայտնի են: Մենք խորապէս համոզված ենք, որ այն սարսափելի չուխաւորները և խանչալաւորները, որոնց մասին գրում է հայ լրագիրը, երևի նրա քաջ աշխատակիցներին երևացել են տեսիլքի մէջ Ստամբոլի փողոցներում գրօնելիս, իսկ լրագրում բերված տեղեկութիւնը բոլորովին չէ վերաբերում եղելութեանը:

Վրաց մամուլի մի այլ օրգան, «Թէմի», ահա թէ ինչ է գրում «...-ի պրովոկատորական վարմունքը» վերնագրով իր յօդուածում.

«Кавк. Слово»-ն պէտք է ինքը յայտարարէր ... Թերթի ասածը անստոյգ և ոչ թէ հաւատար նրան:

Երէկվայ համարում նա թէև աշխատում է ուղղել իր այդ սխալը, բայց արդէն ուշ է: Նրանից յետոյ, երբ հրատարակված լուրը արդէն տարածվեց և վրդովեցրեց բոլոր վրացիներին, առանց կուսակցութեան խտրութեան: Արդարև ում սիրտը չի պղտորվի այսպիսի զզուելի պրովոկացիայից...

Ահա թէ ինչ ծառայութիւն մատուցեց հայ Թերթը հայ-վրացական միութեանը: Այս բոլորը հաստատում է, թէ որքան զգոյշ պէտք է լինենք վրացիներս: ...-ին խորհուրդ ենք տալիս ձեռք վերցնել այսպիսի ճանապարհից, եթէ նա չէ կամենում, որ իրանից երես դարձնեն բոլոր առաջադիմական օրգանները և տարրերը:

Մեր ընթերցողները լաւ գիտեն մեր դիրքը հայ-վրացական յարաբերութեան հարցում: Մենք միշտ ծառայում ենք նրանց միջև համերաշխութիւն հաստատելու գործին: Դրա համար էլ մեզ շփոթեցրեց ...-ի դատապարտելի վարմունքը:

Մենք համոզված ենք, որ այդ վարմունքի գնահատութեան մէջ մեզ հետ կը լինի և հայ հասարակութեան լաւագոյն մասը:

«Кавк. Слово»-ի ղեկավարներին էլ ոչինչ չենք ասում: ... Թերթից նրանց այրված բերանը յետագայում անշուշտ մածունն էլ կը սկսէ փչել:

Իսկ «Սախալխո Փուրցէլի» կիրակի օրվայ համարի լուրերում կարդում ենք.

Բանաստեղծ Իրօդիօն Եվդօշվիլին երէկ, ցերեկվայ ժամը 3-ին, տրամվայի վագոնում նստած կարդում էր «Кавк. Слово» լրագիրը: Այդ լրագրի մէջ հայ Թերթից արտատպված պրովոկացիան նրան այնպէս վրդովեցրեց, որ բերանից սկսեց արիւն հոսել: Նրան իսկոյն ներս տարան Կովկասեան Ընկերութեան դեղատունը, որտեղից շուտափոյթ օգնութիւն հասցնող հանրակառքով տարան տուն: Բժիշկ Միքէլաձէն հասցրեց բժշկական օգնութիւն: Եվդօշվիլին երեք բաժակ արիւն է ործացել և սաստկացել է զարկերակը:

Ի հարկէ լաւ կը լինէր, որ հայ Թերթը չը տպէր այդպիսի նամակ. սակայն ինչու վրաց Թերթերը մի առանձին նշանակութիւն են տալիս այդ հայ Թերթի գրածներին: Կարող ենք ասել, որ նա նոյն դերն է խաղում, ինչ որ խաղում է «Зак. Рѣчь» Թերթը, երբ շարունակ հայերի հասցէին նոյնպիսի պրովոկացիոնական յօդուածներ է տպում: Զարժէ ուշադրութիւն դարձնել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեղրի, 8 հոկտ.

Շնորհակալութիւն ենք յայտնում մեր համագիւղացի Գ. Ասկանդարեանին, որ անցեալներում դպրոցիս գրադարանին է նուիրել 18 անուն (26 կտոր) բաւական արժէքաւոր գրքեր:

Ցանկալի էր, որ պարոնի օրինակը վարակիչ լինէր և մեր միւս համագիւղացիների համար, որպէսզի այս հեռաւոր անկիւնում ժողովրդի միակ մխիթարութիւնը կազմող գրադարանը հարստանար նորանոր գրքերով ու օրագիր ամսագրերով:

Աւագ-ուսուցիչ՝
Արշալոյս Տէր-Յովհաննեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 14 հոկտ.

Կ. Հ. Բ. Ընկ. «Հայկական հիւանդանոցի» օգտին ստացվել են հետևեալ նուէրները. Բժշկ. Բ. Նաւասարդեանից՝ 20 ր., Թիֆլիսի Ժողովարանի ծառայողներից՝ 27 ր. 87 կ., որ գոյացել է նրանց ամսական ռոճիկների 1%-ից: Օր. Սերեբրեակեանից՝ ի յիշատակ իր հանգուցեալ մօր և քրոջ՝ ամսական 5 ր.՝ մինչև պատերազմի վերջը:

Խորհուրդ

Թիֆլիս, 13 հոկտ.

Հայ Ազգագր. Ընկ. խորհուրդը յայտնում է խորին շնորհակալութիւն հետևեալ անձնաւորութիւններին, որոնք Ընկ. մատենադարանին նուիրել են գրքեր.

Միք. Մեսրոպեան՝ 92 կտոր, տ. Վ. Ծատուրեան՝ 76 կտ., Մ. ա. ք. Մելեան՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը ձեռագիր, տ. Կ. Փոնդոյեան՝ Յովս. Գաբր. Փոնդոյեանի ձեռագիրը, Լ. Մելիք-Ադամեան՝ իր աշխատութիւններից 8 կտ., տ. Վ. Քանանեան՝ 6 կտ., տ. Մ. Աբեան՝ 1 կտ., տ. Մ. Ղարաջեան՝ 5 կտ., Լ. Մսերեան՝ «Փարոս Հայաստանի» գրքերը և ուրիշ 2 կտ., Աբգ. Գուլամիրեան՝ իր հրատարակութիւններից 10 կտ., Աստ. Բէկ-Յովսէփեան՝ Ղարաբաղի Մելիք-Շահնազարեան մելիքների մասին 33 Թերթից բաղկացած վաւերաԹղԹեր, Թագւոր Գաւնիկեան՝ 35 կտ.:

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Քարտ.՝ Ե. Լալայեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Նոր կախաղաններ.—Իթթիհադը կուզէ սարսափեցնել իր հակառակորդները.—Թուրք նամակատունները վստահելի են:

Կ. Պոլիս, 6 սեպտեմբեր

Իթթիհադի յաւիտենական մղձաւանջը, Շէրիֆ փաշա, կերևի, չէ դադրած գործի վրայ ըլլալէ և հանգիստն ու քունը խռովելէ երիտասարդ Թուրք վարիչներուն: Շէրիֆ փաշայի վրայ, իր ապաստարանին, Պարիզի մէջ կատարուած մահափորձն ալ չէ վհատեցուցած զինքը, ընդհակառակը պատճառ եղած է, որ ալ աւելի կորովով ու յամառօրէն վարէ իր պայքարը արդի Թուրք կառավարութեան դէմ: Մահափորձը երբ դեռ նոր կատարուած էր, Թուրք ելմտական մինիստր Ջավիդ բէյ Պարիզ էր և սեղանաւորներուն կը քծնէր ու փրանս. կառավարութիւնը կը շոյէր տնտեսական խոշոր Թոյլտուութիւններ տալով, յաջողցնելու համար 700 միլիոն ֆրանկի վերջին փոխառութիւնը. մինչ այդ միջոցին Շէրիֆ փաշան կը պոռար ֆրանսացիներուն Թէ՝ «դրամ մի տաք Թուրքիոյ, դրամ մի տաք Իթթիհադին, մի տաք, յետոյ կը զղջաք: Իթթիհադը Ֆրանսայէն առած դրամը Ֆրանսայի դէմ պիտի գործածէ» և այլն: Շէրիֆ փաշայի ըսածները այն ատեն անարձագանգ մնացին, ու իր յարուցած աղաղակը Թշնամութեան արդիւնք նկատուեցաւ սեղանաւորական շրջանակներու մէջ: Իսկ Իթթիհադը անգամ մըն ալ խելամտութեան և Թուրքութեան դատին դաւաճան հռչակեց Շէրիֆը, Իթթիհադի այդ երդուեալ հակառակորդը: Այսօր սակայն իրականութիւնը եկաւ ապացուցանել, Թէ ճիշդ էին Շէրիֆի կողմէ ըսուածները և Թէ անիկա շատ լաւ կարդացած էր Իթթիհադի վարիչներուն մտածումներն ու ապագայի ծրագիրները: Ֆրանսական «Թան» Թերթը այսօր կանդրադառնայ, Թէև առանց յիշելու Շէրիֆ փաշայի կողմէ ըսուածները, ու «ապերախտ անպիտաններ» կը կոչէ իթթիհադականները, որոնք Ֆրանսայի դրամով Ֆրանսայի Թշնամիներուն կողքին կը կանգնին: Ու Շէրիֆ փաշա կը հրճուի, որ իր ամիսներ առաջ ըսածները կարճ միջոցի մէջ իրականացած են և Թէ լոկ հակառակորդի բարբաջանքներ ու ամբաստանութիւններ չէին անոնք:

Մէկ կողմէ՝ երբ այսպիսի պարագաներ հրճուանք ու բաւականութիւն կուտեն Շէրիֆին, միւս կողմէ սակայն չի կրնար չտխրիլ, երբ մանր-մունր խլրտումներու և աննշան շարժումներու համար իր համախոհները, իր գործակիցները Թուրքիոյ մէջ կը ճզմուին Իթթիհադի անողոք ճանկերուն տակ: Իթթիհադը յարմէ հետէ հարթայական հարուածով մը վերստին ձեռք ձգեց կառավարութեան ղեկը, այնպէս մը պիրկ բռնեց զայն և գիւային աչալրջութեամբ կը հսկէ, որ Իթթիհադի ոչ մէկ շարժումը չի վրիպիր իր ուշադրութենէն: Այսօր Թուրքիան գաղտնի ոստիկաններու, լրտեսներու, խաֆիէներու այնպիսի ցանցի մը մէջ առնուած է, որ համիդեան շրջանն իսկ կը գերազանցէ: Ահա այս կազմակերպուած լրտեսութեան շնորհիւ է, որ վերջերս ձեռք անցուեցան կարգ մը կասկածելի Թուրքեր, որոնցմէ երկու հոգի—պոլսեց Մեհմէդ Թալէաթ և Բէնան—երկուքն ալ պոստի պաշտօնեայ, իբրև գործակիցներ Շէրիֆ փաշայի, երէկ առտու կեդրոնական պոստատան առջև կախաղան հանուեցան: Կախաղաններուն դատավարութիւնը պատերազմական ատեանին առջև կատարուած է գաղտնի, և, ինչպէս կառավարութեան կողմէ հաղորդուած պաշտօնական զեկոյցը կըսէ, յանցաւոր նկատուած և մահուան դատապարտուած են, «Շէրիֆի հետ Թղթակցելնուն, Սինօպ աքսորուած իթիլաֆականներու հետ հաղորդակցելնուն և պետական պաշտօնատուներու նամակներն ու պաշտօնագրերը նամակատունէն գողնալով Շէրիֆի ղրկելնուն, ինչպէս նաև յայտնի քիւրդ ցեղապետ Բէօռ-Հիւսէյին փաշան կառավարութեան դէմ ապստամբելու դրդելնուն պատճառով»:

Կը կարծուի Թէ իթիլաֆական-շէրիֆական բաւական լայն խմբում մը կայ ներկայիս և Թէ պոստային յիշեալ կախուող երկու պաշտօնեաները երրորդական աստիճանի վրայ գործող դերակատարներ եղած են միայն: Այսպէս կամ այնպէս՝ սա ստոյգ է, որ Իթթիհադը այս պահուս նուազ անհանգիստ չէ ներսէն, որքան դրսէն: Գիտէ Թէ իր սայԹաքումին սպասողները պատրաստ են զօրաւոր աքացիներ տալու իր ետեւէն անգամ մըն ալ չկանգնելու պայմանով գահավիժելու համար զինքը: Ու կանխելու համար գահավէժ սայԹաքումը, սարսափ կը սփռէ կախաղաններով, մինչ երկրին օրէնքը մահապատիժ չի սահմաներ անոնց, որոնք «կառավարութիւնը տապալելու ծրագիր մը կը յղանան, կը պատրաստեն Թէև, բայց իրենց ծրագիրը գործադրութեան չի դրուիր»:

Թուրք կառավարութիւնը, ինչպէս ըսինք, պաշտօնական զեկոյցով մը մամուլին միջոցով հաղորդած էր կախուողներուն յանցանքը: Այստեղ կարժէ կէտ մը յիշել, որ արժանի էր ուշադրութեան: Այս զեկոյցով, որ մանրամասնօրէն չգրի եւ հոս, խնայելու համար «Մշակի» էջերը, Թուրք կառավարութիւնը պաշտօնապէս կը խոստովանի, Թէ Թուրքական պոստին պաշտօնեաները եկած պաշտօնագրերն ու նամակները կը գողնան, կը բանան, կը պահեն կամ կանյայտացնեն եղեր:

Բայց այս միևնոյն Թուրք կառավարութիւնը իր ԹղԹատարական-հեռագրական հայ մինիստրին՝ Ոսկան էֆէնդիի բերնով, ինտերվիւի մը մէջ «Jeun Turc» իԹԹիհադական Թերթի խմբագրին, ճիշդ կախաղաններէն մէկ օր առաջ կը յայտարարէր, Թէ Թուրք պոստը տիպար պոստ մըն է: Թուրք պոստը նամակները բացող սև սենեակ չունի: Թէ նամակները անբռնաբարելի են, Թէ Թուրք պոստը սանկ կատարեալ է, Թուրք պոստը նանկ վստահելի է. և այս բոլոր յաւակնոտ ու ծիծաղաշարժ պոռոտախօսութիւնները անոր համար, Թէ օտար նամակատունները աւելորդ են, և Թէ կապիտուլասիոններու ջնջումով անոնք ալ պէտք է ջնջուին, փակուին և ասով ոչ ոք կը տուժէ: Ի հարկէ ամեն մարդ քիչ շատ խնդաց այս ճոճուն ոչնչաբանութիւններուն վրայ, բայց չեմ կարծեր որ մէկ միամիտ գտնուեցաւ, որ հաւատար Թէ՝ Թուրքիոյ մէջ նամակներն անբռնաբարելի են, Թուրքիոյ մէջ, ուր Աստուած մըն ալ եԹէ իջնէ, անբռնաբարելի չի կրնար ըլլալ բնաւ: Հիմա ծռն է ստոյգը, և ժողովուրդը որին հաւատայ. կառավարութեան պաշտօնական ա՞յն զեկոյցին Թէ՝ կախուող պոստային զոյգ պաշտօնեաները շատ մը պաշտօնագրեր ու նամակներ բացած, գողցած ու Շէրիֆ փաշայի ղրկած են, Թէ՞ պոստի մինիստրին յայտարարութեանը, որ կըսէ Թէ Թուրքիոյ մէջ նամակները անբռնաբարելի են և Թուրք պոստը ամեն կատարելութիւնով օժտուած ու ամեն վստահութեան արժանի է: Կուզէք զարմացէք, կուզէք զայրացէք, այսպէս է Թուրքիոյ մէջ. մէկ յայտարարութիւնը միւսը կը բռնէ, մէկ հրահանգը միւսին կը հակասէ, մէկ հրամանով ուրիշ մը կը ջնջուի, երէկուան օրէնքը այսօր զերօ է, այս բովէն խոստացուածը քիչ մը յետոյ կուրացուի, կը մոռցուի. և ասոր կըսեն իԹԹիհադեան Թուրք կառավարութեան ճարպիկ գործելակերպ!!!

Հէթում Հայեան

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Գոլովին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծննդկանաց.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկեաց.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—95

Ատամնաբուժարան
Հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԵԱՆՑԻ
Նախաձեռնութեամբ: Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 76
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին: Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի:
Բուժարանում գործում են 5 բժիշկ-ատամնաբոյժներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է):
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար: Պատրաստվում են ամեն տեսակ ատամ [illegible] և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում:
(օ. մ.) 755. 100—32

ԲԱՑՎԱԾ Է
ՆՈՐ ԴՊՐՈՑ
Կար ու ձևի եւ շքեղ ՁԵՌԱԳՈՐԾԻ, նաև ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ: Հասցէն՝
Сурпъ-Карапетск. овр. № 8, Дулянцъ.
(օ. մ.) 936. 3—2

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
ԲՆԱԿԱՐԱՆ
բաղկացած 5 սենեակից ամեն մի յարմարութիւնով (ջուր, վաննա, խոհանոց, փայտի տեղ և այլն): Հաւլաբար, Кахетинск. пл. № 1, Метехск. ул. № 35. Հարցնել կառավարիչ Լևոն Սանթուրճեանին:
(հ.) 930. 2—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն:
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, Թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն [illegible]
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգօրէն և չափաւոր գներով: [illegible] շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին [illegible]
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այլնու յանձնել:
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻԵՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ:
Տելեֆօն № 67.

Գիւղատնտեսական Բիւրո
Գիւղատնտեսութեանը եւ կօոպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին
ԳԻՒՂԱՏՆՏԵՍ
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ
Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. 8½-ից մինչև 10½-ը, երեկ. ժ. 5½-ից մինչև 7½-ը: Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 10 կոպէկանոց պօստային մարկաներ: Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.
(և. հ. կ.) 921. 0—5

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ
«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» Զ. տպ. 1 ր.
«ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ» հեղինակի ձեռքով բարեփոխած, Գ. տպագրութիւն. . . 5 կ.
Վաճառվում են բոլոր գրախանութներում:
Պատրաստ է տպագրութեան համար «Հայ հեղինակների» II հատորը:
(հ.կ.) 925. 5—3

Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»՝ նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցեպտներով: Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար: Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, րեցեպտներով: Գինը 50 կօպ.:
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը: Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ: Շատ պարզ ու հասկանալի լեզուով: Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել Թէ իրան և Թէ ուրիշներին: Գինը 30 կօպ.:
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու: Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին: Գինը 20 կ.:
Այս երեք գիրքը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Կնիկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վոդևիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն գաղաղում», պատմուածք հայ-Թուրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7.:
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 17 կօպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով: Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(հ. կ.) 327. 100—41

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Իզզաքշեանցի: Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՈԼՈՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից:
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. Նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամ:
Գազային շարժիչներ, որոնք բանում են Թէ բնական և Թէ գեներատորային գազով:
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ):
Ջրի շարժիչներ (տուրբիններ):
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից:
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից:
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից:
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից:
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով:
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ.կ.) 551. 0—39

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. ԱրԹուր Միւլլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի.		25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերավաճառողներին զեղչ կը լինի միայն 25%. (6) 0—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный